
-Ռ -ՈՎ ՎԵՐՋԱՅՈՂ, -Ն ՎԵՐՋԱԾԱՆՅՈՎ ԿԱԶՄՎԱԾ
ԲԱՌԵՐԻ ՄԱՍԻՆ
(Ստուգաբանական վերլուծություններ)*

ՊԵՏՐՈՍ ԲԵՂԻՐՅԱՆ

Բանալի բառեր՝ ստուգաբանված, բնիկ հայկական բառ, փոխառյալ, ծագումով անհայտ, ածանցյալ բառեր, հոլովում, խոնարհում:

Նախաբան

-Ն մասնիկը ցարդ ստուգաբանված մի երկու օրինակում է հիշվում՝նի- ձևով՝ իբրև նախածանց (նայիմ < հայիմ, նեցուկ < յենում, նիւթ < հիւթ - Արմ. բառ., հ. III, էջ 427): Բայց այն, իբրև վերջածանց, ուրույն դրսևորումներով է հանդես գալիս ոչ միայն -Ռ-ով, այլև ուրիշ բաղաձայններով վերջացող, հնդեվրոպական ծագումով թե դեռևս չստուգաբանված բառերում (մատն, հարսն, սերմն, ստեղն, եղէգն ...): Այդ յուրահատկությունը երևում է բառերի ինչպես հոլովաձևերում, այնպես էլ գրաբար → աշխարհաբար պատմական փոփոխություններում, ածանցյալ բառերում:

-Ն վերջածանցի բառակազմական դերը

-ռ-ով վերջացող բառերի մեջ 64-ը -ն վերջածանցով են կազմված և ստուգաբանական տեսակետից հետաքրքրություն են ներկայացնում¹: Դրանցից 38-ը ստուգաբանված են և մեծ մասամբ բնիկ հայկական (հնդեվրոպական) են, մյուսները (26-ը)՝ ծագումով դեռևս անհայտ²:

Վերոհիշյալ կազմությունն ունեցող բառերն ի նչ յուրահատկություններ են դրսևորում:

* Ներկայացվել է 20. III. 2020 թ., գրախոսվել է 12. VI. 2020 թ., ընդունվել է տպագրության 17. VI. 2020 թ.:

¹ Տե՛ս Հայր Գաբրիելի Աւետիքեան, Հայր Խաչատուր Միւրմէլեան, Հայր Մկրտիչ Աւգերեան. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա-Բ, Վենետիկ, 1836-1837, Հայր Մկրտիչ Աւգերեան եւ Հայր Գրիգոր Ճէլալեան. Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865:

² Տե՛ս Ն. Աճառեան. Հայերէն արմատական բառարան, հ. I-IV, Երևան, 1971-1979: Բոլոր ստուգաբանությունները՝ ըստ այս հատորների:

ա) 46-ը գոյականներ են և անկախ իրենց հայտնի կամ անհայտ ծագումից՝ ճնշող մեծամասնությամբ պատկանում են Ա ներքին, մասամբ՝ Բ-Ա ներքին հոլովման: Բերենք դրանցից ամենատարածված զործածություն ունեցողները.

- (ամառն (ամռան // ամրան³) < հնի. som-
 - (ձմեռն (ձմերան) < հնի. g¹hiyōm-
 - (դուռն (դրան) < հնի. dhur-
 - (թիթեռն (թիթռան) // թիթեղն (թիթեղան) < հնի. pter-
 - (ծիծառն (ծիծ[ա]ռան // ծիծեռն < հնի. g¹ār-
 - (սիսեռն (սիսեռան) < հնի. k^{1e}|oi k¹er-
 - (բեռն (բեռին, բեռանց) < հնի. bherno-
 - (զառն (զառին, զառանց) < հնի. vərēn-, vrrēn-
 - (թոռն (թոռին, թոռանց) < հնի. tor-
 - (ձեռն (ձեռին, ձեռաց) < հնի. g¹her-, g¹hers-
 - (մատուռն (մատրան) < հու. ματύριον
 - (փուռն (փռան) < հու. φοῦρος
 - (գուռն (գռան) < ասոր. gūrā-
 - (սեռն «անվի առանցք» (սեռին, սեռանց) < ասոր. sarnā-
 - (փանդիռն (փանդռան) – փոյունգիական փոխառություն
- Ծագումով անհայտ բառերից՝

բուռն (բռան), եղեռն (եղեռան, եղերան), լիսեռն (լի[ի]սռան), կուռն (կռան), ճպուռն (ճպռան), նուռն (նռան), ոլոռն // ոլեռն (ոլոռան // ոլեռան), լեռն (լեռին, լեռանց), ծոռն (ծոռին, ծոռանց), մառն «մշուշ» (մառին, մառամբ) ...

բ) Ածականներ՝ սառն (նաև գոյական է եղել՝ սառին, սառանց) < հնի. k¹ar-, խառն // խուռն (նաև գոյական՝ «բազմություն» – խռան), դառն (նաև գոյական՝ դառին, դառանց), յախուռն, սեռն «պարզ, հստակ»:

Այս երկու կետերում մեջբերված բառերի հետ կապված հույժ ուշագրավ մի հանգամանք կա. հնդեվրոպական նախալեզվի պայմանական սկզբնաձևերի հետ աղերս ունեցող հայերեն առհասարակ բաղաձայնահանգ-ն-ով վերջացող 41 բառերից միայն 7-ը ցեղակից լեզուներում ու ունեն⁴: Դա նշանակում է, որ -ն-ն հայերենի առանձնահատուկ վերջածանցն է: Իսկ փոխատու հունարենում և ասորերենում ու-եր կան: Նշանակում է՝ մատուռն,

³ Գրաբարի հնչյունափոխական օրենքով՝ թեք ձևերում -ն-ից հեռանալու դեպքում ու-ը հերթագայություն է տեղի ունենում (հմմտ. ձմեռն–ձմերան, դուռն–դրան, լեռն–լեռին, լեռանց): Արևմտահայերենն այս հերթագայությունը ավանդաբար պահում է:

⁴ Տե՛ս Հ. Աճառյան. Հայոց լեզվի պատմություն, մաս I, Երևան, 1940, էջ 34–80:

փութն, գութն, սեռն և նման ծագումով բառերում -ն-ի առկայությունը պետք է արդեն յուրահաստուկ տառադարձության հետևանք համարել և ոչ թե անհիմն:

Հայերենի բառակազմության համար հատկանշական է, որ աշխարհաբարում -ն վերջածանցը կորցրած կամ այն -ը-ով փոխարինված բառերն իրենց անհանգստացնելու -ն-ն վերականգնում են. դուռ- դռնակ, դռնապան, դռնփակ, դռնբաց, դռներ (արևմտ. դուռեր), թիթեռ-թիթեռնիկ, թիթեռնալող, թիթեռներ, թոռ-թոռնիկ, թոռնուհի, թոռներ, ծոռ- ծոռնուհի, ծոռներ (արևմտ. ծոռեր), նուռ-նոնենի, նոներ (բայց նաև՝ նուռեր), լեռ- լեռնային, լեռնագագաթ, լեռնալանջ, լեռնցի, լեռներ (արևմտ. լեռեր), ձմեռ- ձմեռնամուտ, ձմեռները (բայց՝ ձմեռել)⁵, խսկց. կուռ- կռնատակ, սառը (սառն)- սառնարյուն, սառնարան, սառնություն, խառը (խառն)- խառնարան, խառնշուկել, խառնամբոխ, խառնիճաղանջ, դառը (դառն)- դառնահամ, դառնություն, դառնանալ ... Այս տեսակետից յուրահաստուկ է ձեռք-ը (ձեռն) - ձեռնտու, ձեռն-հաս, ձեռներեց, ձեռնոց, ձեռնափայտ, ձեռնամարտ, ձեռնունայն, ձեռքեր // ձեռներ: Յուրահաստուկ կազմություններ են ձեռագործ, ձեռագիր, փռապան, մառախուղ⁶:

Հատկանշական է, որ վերևում հիշատակված այն բառերում, որոնցից բայեր են կազմվում, -ն-ն աշխարհաբարում որպես բայածանց (սոսկածանց) չի ընկալվում, ուստի անցյալ կատարյալի հիմքում (աորիստում) չի ընկնում. բեռնել-բեռնեցի, բեռնել (եմ), բեռնած, բեռնի՛ր (արևմտ. բեռնէ՛), բռնել-բռնեցի, բռնել (եմ), բռնած, բռնի՛ր (արևմտ. բռնէ՛), խառնել-խառնեցի, խառնել (եմ), խառնած, խառնի՛ր (արևմտ. խառնէ՛):

զ) Գրաբարում (և աշխարհաբարում) բայական կազմություններում -ն-ն արդեն որպես սոսկածանց է ընկալվում, ուստի և անցյալ կատարյալի հիմքում է ընկնում. առնում («առնել, վերցնել»)- առի, (է)առ ... (աշխ. առա / առի ...) < հնի. ar-, առնեմ («անել / ընել»)- արարի⁷, հրամ. արա՛ ... (աշխ. արեցի / ըրի, արա՛ / ըրե՛ ...) < հնի. ar-, բառնամ («1. վերացնել 2. [զետնից] վերցնել»)- բարձի, (ե)բարձ, հրամ. բա՛րձ ... < հնի. bhr̥g¹h-, դառնամ- դարձայ, հրամ. դարձի՛ր ... <

⁵ Արևելահայերեն ամառային, ձմեռային բառերի դիմաց արևմտահայերենն ունի ավանդական օրենքով կազմված ամառնային, ձմեռնային:

⁶ Բառակազմական նույն կարգը գործում է նաև -ն վերջածանցով ուրիշ բառերի անհանգստացնելու, ինչպես՝ մատ (մատն) - մատնեմատ, մատնոց, մատնահետք, մատնել..., սերմ (սերմն) - սերմնացան, սերմնագոյն, սերմնատեսակ... (բայց՝ սերմեր), եզ (եզն)- եզնասայ, եզներ (արևմտ. եզեր)...

⁷ Ռ-Ը հերթագայության մասին տե՛ս թիվ 3 ծանոթագրության մեջ:

հնիւ. dhrg¹h-, յառնեմ («բարձրանալ») – յարեայ, հրամ. արի՛ ... < հնիւ. ք-, er-, or-, ընթեռնում – ընթերցայ, հրամ. ընթերցի՛ր ... < հնիւ. ter-:

Վերոշարադրյալը պարզ վկայում է, որ՝

ա) հայերենը դեռ նախագրային շրջանից ունեցել է (և ունի) բառակազմական մի ուրույն՝ -ն ածանց,

բ) սրանով կազմված բառերը մեծ մասամբ գոյականներ են,

գ) աշխարհաբարն այդ բառերի ուղիղ ձևում եթե -ն-ն չի էլ պահել, ապա ածանցյալ կազմություններում այն թողել է (գրք. մասն → աշխ. մաս → մասնատել, մասնավոր, բարեմասնություն, մասնակից, մասնաբաժին ...),

դ) բառակազմական այս ածանցը որոշակիորեն տարբերվում է -ն բայածանցից (ստկածանցից) թեկուզ նրանով, որ այդ ածանցն ունեցող բայերի անցյալ կատարյալի հիմքում այն չի ընկնում (հմտ. բուն → բունել → բուն-եցի և գրք. առնում → առ-ի, աշխ. առնել → առ-ա ...),

ե) -ն ստկածանց ունեցող բայերը գրաբարում շատ չեն. եղածներն էլ մեծ մասամբ ՈԻ խոնարհման են պատկանում (առնում → առ-ի, ցասնում → ցասեայ, հարթում «խրտնել» → հարթեայ ...): Աշխարհաբարում են -ն ստկածանցավոր բայերն ավելացել՝ շնորհիվ այն բանի, որ գրաբարի -ան-ի նախաշեշտ թույլ -Ա-վանկարարը, պատմական փոփոխությամբ, սղվել է (գտանեմ → գտ-ն-ել, իջանեմ → իջ-ն-ել, բուսանիմ → բուս-ն-ել ...):

Եզրակացություն

Այսպես. փաստորեն ունենում ենք -ն բառակազմական ու -ն ձևաբանական հոմանուն մասնիկներ: Եվ դեռ կա 3-րդ հոմանունը՝ մի քանի բառերի գրաբար հոլովման եզակի սեռական-տրականի, մեկ էլ տրականից կազմված բացառականի -ն-ն. այրեզ ... սեռ... -տր. առն, տեառն, բացառ. յառնե, ի տեառնե:

Պետրոս Բեդիրյան – բ. գ. դ., պրոֆ.: Գիտական հետաքրքրությունները՝ ընդհանուր լեզվաբանական ու հայագիտական հարցեր, բառագիտություն, ստուգաբանություն, դարձվածաբանություն, գրաբար, արևմտահայերեն, բառարանագրություն: Հեղինակ է 33 գրքի և շուրջ 200 հոդվածի: petros.bediryan@gmail.com

REFERENCES

- Acharyan H. Hayeren armatakan bararan, h. I–IV, Yerevan, 1971–1979 (In Armenian).
 Acharyan H. Hayots lezvi patmutyun, mas I, Yerevan, 1940 (In Armenian).

Hayr Gabriel Avetikean, Hayr Khachatur Siurmelean, Hayr Mkrtich Avgerean. Nor bargirk haykazean lezui, h. A–B, Venetik, 1836–1837 (In Grabar).

Hayr Mkrtich Avgerean ev Hayr Grigor Jelalean. Ardzern bararan haykaznean lezvi, Venetik, 1865 (In Grabar).

ОБ АРМЯНСКИХ СЛОВАХ, ОКАНЧИВАЮЩИХСЯ
НА ՚, С СУФФИКСОМ Ն
(Этимологические анализы)

ПЕТРОС БЕДИРЯН

Р е з ю м е

Ключевые слова: этимологизированное, исконно армянское слово, заимствованное, с неизвестной этимологией, производные слова, склонение, спряжение.

38 из 64 армянских слов, оканчивающихся на Ռ и с суффиксом Ն, этимологизированы и преимущественно являются существительными исконно армянского (индоевропейского) происхождения: *ամարնի* [амарын] «лето», *ձյուննի* [дзымэрын] «зима», *բերնի* [бэрын] «груз», *գարնի* [гарын] «ягненок», *թորնի* [торын] «внук», *ծիծեռնի* // *ծիծարնի* [тситсэрын, тситсарын] «ласточка». В родительном падеже они, в большинстве своем, имеют Մ перед Ն (*ամարնի*, *ամարնի*), *դուրնի* [дурын] «дверь» – *դուրնի*, иногда *Ի-Մ* (ед. *գարնի*, мн. *գարնի*), *լեռնի* [лярен] «гора» – ед. *լեռնի*, мн. *լեռնի*.

Весьма знаменательно, что лишь в 7 из 41 исконно армянских слов индоевропейского происхождения, оканчивающихся на согласный + суффикс Ն (*ամարնի* и пр.) встречается Ն в родственных языках. Это значит, что суффикс Ն – сугубо армянский.

В новоармянском (в ашхарабаре) слова вышеуказанной конструкции выступают без суффикса Ն, однако он (суффикс) восстанавливается в производных словах: *բերնի* → *բերն*– *բերնաշար* (бэрнатар) «грузовик», *բերնաշարադուրնի* (бэрнатарогутюн) «грузоёмкость», *բերնել* (бэрнэл) «грузить», *բերնել* (бэрнэр) «грузы», *դուրնի* → *դուրն* – *դուրնապակ* [дырынпак] «за закрытой дверью», *դուրնապակ* [дырнапан] «швейцар», *դուրնել* [дырнэр] «двери».

Петрос Бедирян – д. филол. н., проф.. Научные интересы: общие вопросы языкознания и арменоведения, лексикология, этимология, фразеология, грабар, западноармянский язык, лексикография. Автор 33 книг и около 200 статей.
petros.bediryan@gmail.com

ON WORDS ENDING IN *Ռ*, WITH THE SUFFIX *Ն*
(Etymological analyses)

PETROS BEDIRYAN

S u m m a r y

Key words: Etymologized, original Armenian word, borrowing, with unknown etymology, derived words, inclination, conjugation.

38 out of 64 Armenian words ending in *Ռ*, with the suffix *Ն*, are mainly nouns of Indo-European origin: *ամառն* [*amaren*] “summer”, *մառն* [*dzemeren*] “winter”, *բեռն* [*beren*] “burden, load”, *գառն* [*garen*] “lamb”, *թոռն* [*toren*] “grandchild”, *ծիծեռն* // *ծիծառն* [*tsitseren, tsitsaren*] “swallow”... Before *Ն*, they have *U* or, rarely, *Ի-U* in genitive case: *դուռն* [*duren*] “door” - *դրան* [*deran*], *մառն* - *մառնան*, *մարան*, *գառն* (*sing. գառնի, pl. գառնաց*), *լեռն* [*learen*] “mountain” - *sing. լեռի, pl. լեռաց*...

It is quite significant that in 7 cases only out of 41 Armenian words of Indo-European origin ending in a consonant + the suffix *Ն* (*ամառն* etc.), N exists in related languages. It means that the suffix *Ն* is a purely Armenian one.

In Modern Armenian (Ashkharhabar), the words mentioned above appear without the suffix *Ն*, however this suffix recovers in derivative words: *բեռն* → *բեռ* - *բեռնաստար* [*bernatar*] “truck”, *բեռնաստարողություն* [*bernataroghutyun*] “capacitance”, *բեռնել* [*bernel*] “load”, *բեռնեք* [*berner*] “burdens”, *դուռն* → *դուռ* - *դռնփակ* [*derenpak*] “behind closed doors”, *դռնապան* [*dernapan*] “doorkeeper”, *դռնեք* [*derner*] “doors”...

Petros Bediryan – Doctor of Sciences in Philology, Professor. Scientific interests: issues of general linguistics and Armenology, lexicology, etymology, phraseology, Classical Armenian (Grabar), Western Armenian, lexicography. Author of 33 monographs and over 200 articles. petros.bediryan@gmail.com